ASUE
SPECIALIZATION • EXPERIENCE • OPPORTUNITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ЭКОНОМИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ

N 01/01-692

«10» 06 2025թ.

«Լեոպարդ Շին» ՍՊԸ-ի
Տնօրեն Ֆ. Մարգարյանին
(հասցե՝ Արարատի մարզ
Գ. Ոստան Մայիսյան փ 62տ)
ՀՎՀՀ՝ 04252855, էլ. հասցե leopardshin2025@gmail.com)

Ծ Ա Ն Ու Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հարգելի պարոն Մարգարյան.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Լեոպարդ շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 05.05.2025 թվականին կնքվել է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՆՏ-1-8 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագրի), համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է ապրանքների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Վաճառողը 21.05.2025 թվականին մատակարարել է պայմանագրի 7-րդ և 9-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները ամբողջությամբ, իսկ 27.05.2025 թվականին մատակարարել է պայմանագրի 39-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները ամբողջությամբ, իսկ 14-րդ չափաբաժնով նախատեսված 6500 հատ երկշերտ զուգարանի թուղթը պայմանագրով սահմանված ժամկետում մինչև 30.05.2025թ- ը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով 02.06.2025 թ -ի Ձեր կողմից ուղարկված գրությունը առ այն, որ **հրաժարվում եք** 14-րդ չափաբաժնի՝ երկշերտ զուգարանի թղթի մատակարարումից, ինչպես նաև գրության մեջ մեջբերված պատճառաբանությունից ՝ որով դուք հայտնում եք, թե իբր հնարավոր չէ մատակարարել 14-րդ չափաբաժնով՝ «զուգարանի թուղթ» ապրանքը՝ դրա տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառաբանությամբ՝ հղում կատարելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման 22-րդ կետին հարկ ենք համարում նշել, որ նույն գնման գործընթացում գնային առաջարկ են ներկայացրել երկու կազմակերպություն, ինչը վկայում է, որ հրավերում ներկայացված տեխնիկական բնութագրերը եղել են մրցակցային և հասանելի մեկից ավելի տնտեսավարողների: Ձեր կազմակերպությունը ճանաչվել է հաղթող, իսկ մյուս մասնակիցը իր մասնակցությամբ փաստել է, որ տվյալ ապրանքը հնարավոր է մատակարարել պահանջվող բնութագրով ավելին՝ նշված ապրանքատեսակի բնութագրին համապատասխան ապրանք նախկինում մատակարարվել է մեկ այլ կազմակերպության կողմից, որը մասնակցել և հաղթել է նախորդ գնման գործընթացում: Ապրանքն առ այսօր առկա է մեր պահեստում: Ձեր կազմակերպության ներկայացուցիչին տվյալ ապրանքը ցուցադրվել է՝ որպես օրինակ, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ապրանքը շուկայում առկա է և տեխնիկապես հնարավոր է մատակարարել:

Տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմվել է՝
հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.10.2006թ. N 1546-Ն հաստատված որոշումը «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը» հաստատելու մասին , ինչը վկայում է, որ բնութագրումը հիմնված է պետական ստանդարտների վրա և չի կարող համարվել անհիմն կամ խտրական:

Հրավերի 3.5 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման 25-րդ կետով նախատեսված կարգով Դուք հնարավորություն ունեիք դիտողություն կամ պարզաբանում ներկայացնելու մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, սակայն այդ հնարավորությունից չեք օգտվել: Այդպիսով՝ Դուք լիարժեք ընդունել եք պայմանները, ներկայացրել եք գնային առաջարկ և կնքել եք պայմանագիր՝ ստանձնելով համապատասխան ապրանք մատակարարելու պարտավորություն:

Մատակարարման ընթացքում արձանագրվել է, որ մատակարարված ապրանքը՝ զուգարանի թուղթը, չի համապատասխանել մրցութային բնութագրին՝ 65 մետրի փոխարեն ունենալով 48 մետր երկարություն: Ապրանքը մերժվել է: Բացի այդ, արձանագրվել է, որ այլ չափաբաժնի ապրանքի դեպքում ևս փորձ է արվել մատակարարել տեխնիկական առումով անհամապատասխան ապրանք, որը միայն մեր պահանջով է փոխարինվել բնութագրին համապատասխան տարբերակով:

Այսպիսով, Ձեր կողմից ներկայացված բացատրությունները չեն կարող համարվել հիմնավոր, և Ձեր հրաժարումը մատակարարման պարտավորությունից կդիտարկվի որպես պայմանագրով ստանձնած պարտավորության խախտում: Հաշվի առնելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Լեոպարդ Շին» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի 2.1-րդ կետի կարգավորումները՝

- համաձայն 2.1.1 կետի՝ Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե այն չի մատակարարվել պայմանագրով սահմանված ժամկետում,
- համաձայն 2.1.2 կետի՝ Գնորդն իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե այն մատակարարվել է անպատշաճ որակի կամ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող տեսքով,

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը միակողմանի մասնակի լուծում է N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՏՆՏ-1-8 ծածկագրով պայմանագիրը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարատավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ ՝պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում **պայմանագրի կատարման ապահովման** գումարը կազմում է **97500** (իննսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և **որակավորման ապահովման գումարը** կազմում է **146250** (մեկ հարյուր քառասունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900018001876» հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ձեր կողմից վճարվի և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացվի ՀՊՏՀ-ի գնումների բաժին , ապա «Լեոպարդ Շին» ՍՊԸ-ն չի ներառվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ռեկտոր՝ _____ **Ա. Գրիգորյան**

Կատարող գնումներ համակարգող՝
Նորայր Վարդանյան
հեռ.593-483